Հաշվետվություն

2022 թվականի նոյեմբերի 23-25-ը Արաբական Միացյալ Էմիրություններում կայացած Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 25-րդ նիստին մասնակցության վերաբերյալ

Ա. ներածություն

- մասնակիցների կոչումը, անունը, ազգանունը, պաշտոնը

ԱԻՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ, Արտաքին կապերի վարչության պետի պարտականությունները կատարող **Լիլիթ Մկրտչյան**,

Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի տնօրեն **Պավել Գյոզալյան**:

- գործուղման, միջոցառման անցկացման հիմքը (հրաման, հանձնարարական, ամսաթիվ)

ՀՀ վարչապետի 08.11.2022թ. թիվ 1328-Ա որոշում,

Արտակարգ իրավիճակների նախարարի 18.11.2022թ. թիվ 1317-Ա հրաման:

- միջոցառման անվանումը, վայրը, ժամկետը

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ICDO/ՔՊՄԿ) Գլխավոր ասամբլեայի 25-րդ հերթական նստաշրջան

Արաբական Միացյալ Էմիրություններ, Աբու-Դաբի 2022 թ. նոյեմբերի 23-ից 25-ը:

Բ. միջոցառման մասնակիցներ, պետություններ

Ռուսաստանի Դաշնություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Կատարի Պետություն, Սերբիայի Հանրապետություն, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Ալժիրի Ժողովրդավարական Հանրապետություն, Տաջիկստանի Հանրապետություն, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, Վրաստան, Ադրբեջանի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն անդամ այլ պետությունների ներկայացուցիչներ և ասոցացված անդամի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ:

Գ. միջոցառման նպատակը

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության Գլխավոր ասամբլեայի նիստերը հրավիրվում են երկու տարին մեկ պարբերականությամբ: 25-րդ նիստն ուներ նպատակ իմի բերելու և ամփոփելու կազմակերպության գործունեության երկամյա արդյունքները՝ այդ թվում կազմակերպության գործունեության ֆինանսական հաշվետվությունը, 2023-2024 թվականների գործողությունների պլանը:

Դ. քննարկված թեմաները

Գլխավոր ասամբլեայի 25-րդ նիստի ընթացքում քննարկված գլխավոր թեմաներն էին՝

- Գլխավոր ասամբլեյի նախագահի և փոխնախագահի ընտրությունը,
- Կազմակերպության Գործադիր խորհրդի նոր կազմի հաստատումը,
- նոր անդամ պետության հայտի դիտարկումը,
- Գիտակրթական կոմիտեի հաշվետվությունը,

- Կազմակերպության ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը,
- 24-րդ նիստից ի վեր Կազմակերպության գործունեության վերաբերյալ զեկույցը,
- Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի՝ Կազմակերպության ասոցացված անդամի կարգավիճակից բացի ՔՊՄԿ Հարավային Կովկասի և Միջին Արևելքի տարածաշրջանային ուսումնական կենտրոն դառնալու հայտը,
- ՔՊՄԿ գործունեության 2023-2024 թվականների ծրագիրը և այլ հարցեր:

Ե. **քննարկումների արդյունքները և հիմնական մոտեցումները**

Նիստի արդյունքում հաստատվեցին՝

- ՔՊՄԿ 2023-2024 թվականների գործունեության ծրագիրը,
- 2023 թվականի բյուջեի նախագիծը,
- անդամ պետությունների ներդրումների վերաբերյալ զեկույցը,
- Կազմակերպության նոր ներքին կանոնակարգը,
- 54-րդ և 55-րդ Գործադիր խորհրդի որոշումները,
- Բավարարվեց Վանատուի՝ Կազմակերպության անդամ պետություն դառնալու հայտը,
- ՔՊՄԿ Հարավային Կովկասի և Միջին Արևելքի տարածաշրջանային ուսումնական կենտրոն դառնալու՝ Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի հայտը Գլխավոր ասամբլեայի դրական որոշմամբ ներկայացվելու է Գործադիր խորհրդի հաստատմանը:

Զ. **հետևություններ և առաջարկություններ**

Է. Անուն , ազգանուն, ստորագրություն, ամսաթիվ

Լիլիթ Մկրտչյան

Պավել Գյոզալյան

30.11.2022 թ.